ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8բ դասարանի ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Արամ Մելիքյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփում
ա) ուսման առաջադիմությունը 2-րդ կիսամյակում
բ) տարեկան գնահատականների ամփոփում
գ) հաճախումների արդյունքները ուսումնական տարվա ընթացքում

1. Լսեցին.- 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արամ Մելիքյանը:
Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 2-րդ կիսամյակի արդյունքները և նկատեց, որ այս կիսամյակում աշակերտներից շատերը աշխատասիրության շնորհիվ ապահովեցին բավականին լավ արդյունք, որը դրականապես ազդեց տարեկան գնահատականների վրա: Արդյունքում՝ դասարանում ունեցանք 2 գերազանց (Հակոբյան Աստղիկ, Բաղալյան Ամալյա) և 4 հարվածային (Ղազարյան Լիանա, Մարգարյան Վրեժ, Ղարիբյան Սվետլանա, Վարդանյան Անի) առաջադիմությամբ աշակերտ:
Նշվեց հան, որ բացակայությունների թիվը ուսումնական տարվա ընթացքում կազմել է 91ժամ, առաջադիմությունը 100, իսկ որակական ցուցանիշը 28,5 տոկոս է:
Կատարվել է դասագրքերի ընդունում և հանձնում՝ առանց թերությունների:

Որոշեցին.

Նպատակաուղղված և ճիշտ կազմակերպել ամառային հանգիստը, որպեսզի 9-րդ դասարանում բարձր արդյունքներ գրանցվեն: Ծնողական խորհրդի անդամները հատուկ շնորհակալություն հայտնեցին դասղեկ Ար. Մելիքյանին կատարած աշխատանքի համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ ---------- Ամ. Մկրտչյան
Քարտուղար՝ ---------- Ա. Գեղամյան